


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է  
գրութիւն պէտք է ուղղել առ  
Տնօրին ԱՐՇԱՆՅՍ յազրի  
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN  
Direc.- propr. du journal arménien  
ARCHAËLOUICE  
LE CAIRE (EGYPTE)



ԲԱՃԱՆՈՐԴԱԳԻՒԹԻՒՆ

ԵՂԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Նորեմբերի ողջ դասիկն.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՒՄ	
Տարեկան	Պրակտ 20
Վեցամսեայ	« 12

### Լ Ր Ա Գ Ի Ր

## ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳԻՒՆ ԿԱՆՈՒԿ  
Եւ թղթատարի ծախքը  
հոնքագրութեան վրայ է :

հոնքագրութեան ուղղութեամբ  
գրութիւնք էս չ'են տրուիր

Ա.ՉԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԿ  
Կանխիկ վճարելի են

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՇԱՆՅՍԻ Պատ. բաժանորդներէն  
կը խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԴ տարւոյ բա-  
ժանորդագիրը որ կը Տնօրինութեան հաս-  
ցէին :

ԱՐՇԱՆՅՍԻ Պատ. բաժա-  
նորդներէն ալ ջերմապէս կը խնդրուի,  
որ բարեխաճիկ նախորդ տարիէն մնաց-  
եալ պատճառ կցեղով որ կը նաեւ իրենց  
ԵՐԿՐՈՐԴ Տարեջրացի բաժանորդագիրը,  
եւ հարկ չը քողոյ մասնաւոր դիմումնե-  
րու, որով ընդ դժուարութիւն մը պիտի  
ըլլան ԱՐՇԱՆՅՍԻ արդէն բազմագրացի  
Տնօրինութեան :

### ԴԵՌ ԻՆՁ ԿՐՆԱՆՔ ԸՆԵԼ

Առիթը ներկայանալու ատեն, ինչ որ  
յաճախագէտ եղած է, կրկնած և վերա-  
կրկնած ենք մեր հանրագուռ ձեռնարկնե-  
րու և բարեօրական ընկերութեանց մասին  
թէ՛ ինչ կացութեան մէջ կը գտնուին,  
ինչ տեսակ գործունէութիւն և ինչ ար-  
գիւնք ցոյց կուտան :

Այժմէն եթէ չ'ըսենք թէ շատ մեծ և  
անբաղաւտելի արգիւնքներ արտադրած են  
ասոնք, գէթ վստահօրէն կրնանք ըսել թէ՛  
իրենց սահմանին մէջ, իրենց միջոցներուն  
ներած չափով օգտակար հանդիսացած են.  
և դարձեալ՝ միևնոյն վստահութեամբ կը  
կրկնենք թէ՛ այս սկզբնաւորութիւնները ի-  
րենց շատ արգիւնաւոր ապագան կրնան ու-  
նենալ :

Մեր ընկերային ձեռնարկները առաւել  
ևս հիմնական և արգիւնաւոր դարձնելու  
համար միշտ պէտք ունինք յեղյեղելու թէ՛  
ԴԵՌ ԻՆՁ ԿՐՆԱՆՔ ԸՆԵԼ :

Աչքի առջև ունենանք մեր Որբասիրաց  
Ընկերութիւնները որ տարիուկէսէ ի վեր,  
լուրջ ջանքեր ի գործ կը դնեն, իրենց վը-  
րայ առած որբասիրական անունին համա-  
պատասխանող գործունէութիւն մը ցոյց  
տալու համար :

Գլխաւորապէս երեք են ասոնք, և կայ  
նաև Մայր որբասիրացէն բաժնուած մաս մը՝  
որ իրեն համար զատ անուն մը նշանակե-  
լով, եթէ ո'չ իրապէս անկեղծ, գոնէ ձևա-

կանօրէն բան մը ըրած ըլլալու համար և  
ստէպ նախանձուտի ծակ աչքերով կը հետե-  
ուին միւսներուն :

Ըսինք որ բուն Որբասիրացները երեք  
են, այժմ համառօտիւ քննենք ասոնց գոր-  
ծունէութեան չափը և ներթական կարողու-  
թեան քանակը և յետոյ ըսենք թէ՛ ԴԵՌ  
ԻՆՁ ԿՐՆԱՆՔ ԸՆԵԼ :

Ա. Գահիրէի Հայոց Որբասիրաց ընկե-  
րութիւն : Նախանձելի գիրք մը ունի այ-  
սօր, Պատ. Գործ. Ժողովոյ անդամաց, մա-  
նաւանդ Ատենապետին, անդու ջանից չը-  
նորհիլ :

Իր դրամադուլը այժմ 100 ոսկի է՝ և  
վստահելի ձեռքերու մէջ կը գտնուի,  
քիչ ատենէն այդ գումարին քանակը պիտի  
բարձրանայ 200 ի. զայս՝ առանց ո՛ր և է  
տարակույսի վստահօրէն կը յայտարարենք :

Առանց կրօնի խտրութեան 10 որբեր  
կը պահէ Արաբիերի որբանոցին մէջ,  
որոցմէ երկուքը բողոքական և մէկը կա-  
թոլիկ ազգայնաց կը պատկանին և կը խը-  
նամուին ընդ հսկողութեամբ Արաբիերի Ա-  
ռաջնորդ Գեր. Մուշեղ Ծ. վարդապետ  
Սերոբեանի և ինչպէս անցեալ օրեր ծանու-  
ցինք այս էջերուն մէջ, 30 ոսկույ գումար  
մ'ալ զրկած էին իրենց որդեգիրներու տա-  
րեկան ծախքերուն առ հաշիւ :

Ստոյգ աղբիւրներէ կը տեղեկանանք  
թէ, իրենցմէ պաշտպանեալ խեղճ որբուկ-  
ներուն թիւը՝ քիչ ատենէն աւելցնել կը  
խորհին Պատ. Գործ. Ժողովոյ անդամք :

Ահաւասիկ ընկերութիւն մը՝ որ իր կա-  
րողութեան ներած չափով օգտակար կը  
դառնայ և հուրի ու սուրի մատուցած մեր  
եղբայրներէն մեզի կտակուած՝ անթիւ ու  
անհամար որբերու քանի մը հատին ար-  
ցունքի կաթիլները կը դադրեցնէ :

Բայց մենք այսպիսին մէջ խղճի հան-  
դարտութիւն չ'կարենալով գտնել, միշտ  
պէտք ունինք մենք մեզի հարցնելու թէ՛  
ԴԵՌ ԻՆՁ ԿՐՆԱՆՔ ԸՆԵԼ :

(Շարունակելի) Ե.

ԱՐՇԱՆՅՍԻ անցեալ թիւերէն մէկովը մեր  
ըրած խոստման համաձայն՝ այսօրուրէն կըս-  
կինք հրատարակութիւնը ԹՈՒՐԻԹԻՍ 1876  
էն ի վեր ԳՐԻՔՈՅԻ Քինսոգատականին, որ  
ամենամեծ հոգածութեամբ պատրաստուե-  
լով՝ զրկուած է մեզ ի հրատարակութիւն :

Մեր ընթերցողաց լուրջ ուշադրու-  
թեան կը յանձնարարենք քանի մը տեսա-  
կէտներով կարևոր սոյն քննադատականը :

### ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

« ԹՈՒՐԻԹԻՍ 1876 ԷՆ  
Թ Վ Ե Ր »  
ՏԵՏՐԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Երեսուն երկու էջերէ բաղկացեալ այս ո-  
ղորմելի տետրակն՝ որոյ հեղինակն է Տ. Սմբատ  
Փափագեան, երբեմն « փաստաբան Միջազգային  
Նախնական Դատարանաց » և այժմ՝ Նոր Օր ի  
վարչութեան Քարտուղար ներկայացուցիչ և  
միանգամայն արդի Պարագիւրը եւն. և ինչ. հը-  
րատարակուած է ի Գահիրէ 1894 ի վերջին,  
Սասնոյ ահաւոր ջարդերէն քանի մ'ամիսներ  
յետոյ : Հեղինակը կարծես ուզած է թաթխել  
իւր գրիչը զեռ չ'ցամքած արեան մէջ՝ ուր կը լը-  
ղար մեր նահատակ Հայրենիքը : Անդին Մայր-  
Հայաստան կը հեծեր հողեվարքի մէջ, ասդին  
Սմբատ Փափագեան կերպէր իւր օրերը Սուլ-  
թանի սխրագործութիւնները : Ողբացեալ կլա-  
տաթոնի խարակած « Մեծ Մարգարայան » թուր-  
քիոյ վերանորոգիչն է Պր. Սմբատ Փափագեանի  
համար :

Այս երկին հրատարակութեան մէջ եթէ  
կայ դիտելի պարագայ մը, այն ալ ս'ա է թէ  
զբոյժին թէև հրատարակուած՝ սակայն ի վեր-  
ջոյ հրապարակի վրայ ազատ ջրլարներութեան  
զրկուած է, անանկ որ շատ քիչ օրինակներ կը  
գտնուին այժմ հոս ու հոն. հեղինակն անշուշտ  
զբացած լինելու է թէ այդ երկի եղբայրասպան  
կայնի նշանին նման յաւիտենական արատ մը  
պիտի մնար իւր ձակաին վրայ :

Թէ ինչ ակնկալութեան էրդուած կրնայ  
ձեռնարկած ըլլալ հեղինակն այնպիսի հրատա-  
րակութեան մը՝ քանի որ իւր ազգայնաց կող-  
մանէ պախարակումն անխուսափելի էր, և  
միւս կողմանէ իբրև գրական կամ վիճակագր-  
ական գործ, խիստ աննշան, ողբալի կերպով  
թիւր ու թերի գրուածք մը ըլլալով, հեղինակին  
փառապաշակ մը ըլլալէ շատ հեռի էր յայտ օտա-  
րաց : Անշուշտ թուրք կառավարութեան նը-  
թական վարձատրութեան մ'ակնկալութեամբ  
ձեռնարկած է այդ երկասիրութեանը : Ինչպէս  
որ ալ մեզ կը հաւաստեն թէ գրեցի ինչ մէկ թա-  
շապատ օրինակն զրկուած է մտապէս « Մուխթար  
Փաշայի » միջոցաւ : Սակայն հեղինակն յուսա-  
խաբ եղած է՝ գէթ մենք այսպէս կը կարծենք :

Հոս անցողակի ըսենք թէ այդ երկասիրու-  
թիւնը որ գաղիերէն լեզուաւ է, շատ խեղճ ու  
ողորմելի ոճով մը գրուած է, անանկ որ հեղի-  
նակին գաղիերէնի մէջ ունեցած անհմտութիւ-  
նը և խակութիւնը ցոյց կուտայ ակներև կեր-  
պով :

Գրեցի կը բաղկանայ երկու գլխաւոր  
մասերէ մին Համիտ Բ. ի գահակալութեան իվիւր  
կատարուած հիմնարկութիւնը և հասարակային  
ձեռնարկը. իսկ միւսը վարչային կազմակեր-  
պութիւնը : Ընթերցողն պիտի տեսնէ թէ այս  
ողորմելի գրեցի լի է անպատկառ ստույթիւն-  
ներով, գծուած շողորթութիւններով և թրքա-

կան անհեթեթ խեղաթիւրումներով : Մայրէ ի ծայր կը նշմարուի տկար , վրան բաց փորձ մը եւ անզօր ճիգ մը , տեղ տեղ քողարկելու բարբարոսական եւ յետագէժ գրութիւններ եւ տեղ տեղ փայլուն եւ իրական ցոյց տալու ինչ որ լոկ անուանական եւ ձեւական յառաջդիմութիւններ են : Հեղինակին յօրինած այդ խարտուլ շէնքն քայքայել ծայրէ ի ծայր , կամ ուրիշ խօսքով՝ կէտ առ կէտ հերքել այդ տախտիկ գրութիւնը շատ դիւրին էր , սակայն փորձը որքան հեշտ , նո՛յնքան ալ տաղտալի պիտի ըլլար , եւ անտրակին եռապատիկ ու քառապատիկ ստուարութեամբը հրատարակութեան մը ձեռնարկել հարկ պիտի ըլլար , ուստի կը բաւականանանք լոկ քանի մը համառօտ դիտողութիւններով եւ միանգամայն մասնաճիւղ ընկնելով ամենէն ծաղրելի հատուածներու մի քանին միայն :

Այս ծաղրաշարժ հատուածներու շարքին մէջ են , « Գանձային յայտնաբերում » երկրի մը համար՝ որ գրամագէտ սնանկացիալ վիճակի մը մէջ կը գտնուի . « Երկրագործութիւն » որ թուրքիոյ պէս բազմաբնակչութեան երկրի մը համար ամենայնպէս եւ խղճալի վիճակի մը մէջ է . ճարտարաբան եւ Մանուկ » որ միջնադարեան դարաքննական ճնշիչ օրէնքի տակ կը հիծէ . « Անհասարակ Իրաւունք » որ երբէք գոյութիւն չ'ունի . « Խղճի եւ Կրօնի սպասարար » Գաղափարական եւ Գաղափարական հասարակութիւն եւ քարոզական . . . Ա՛հ թուրքիոյ բարոյականը . . . կ'երեւի թէ հեղինակին թուրք դպրոցներու մէջ սնած ըլլալով թուրքիոյ բարոյականն ալ իւրացուցած է բոլորովին , որուն շօշափելի եւ գուն հետեւանքն ալ կրած է հոս , անանկ որ միջադպարի դատարանէն դադարման դատապարտուած է եւ զրկուած դատաւարելու իրաւունքէն :

Հեղինակը իւր նախաբանը կ'սկսի հետեւեալ կերպով :

« Օսմանեան Օգոստոսիան վեհապետին բարձրացումն ի բարձր գահ թուրքիոյ , երկրին համար անհեթեթ երջանկաւոր օրերէն մին եղաւ :

Թէ Սուլթանի կառավարութիւնը երկրին համար իրապէս « անհեթեթ երջանկաւոր օրերէն մին եղաւ » թէ . . . այս մասին մենք աւելորդ կը համարինք մեր կողմանէ ո՛ր եւ է դիտողութիւն . զանց կ'ընենք նաեւ եւրոպացի ճամբորդներու կրած տխուր տպաւորութիւնները , Սուլթանի ձախաւէր կառավարութեան աւերիչ տիրապետութեան իրական ու ճշգրիտ նկարագրութիւնները , եւ կը բաւականանանք մէջ բերելով բազմաթիւ լուսամտի եւ ողջխտի թուրք սահմանադէտներու ու մոլլաներու կողմէն արտասահմանի թերթերու մէջ երեւցած գանգատներուն ու տրտուշներուն մէջ հասն միայն որ հրատարակուած էր Իէլ-Մէլ Կադէթի 1893 մայիս 10 թուոյն մէջ . Ստ . Մ . ( թուրք մուլլա մը ) ստորագրութեամբ :

. . . « Եթէ ծանօթ լինէր մեր վիճակը , եթէ քննուէին այն սոսկալի եղեռնագործութիւնները , որ այրիացուցած են բազմաթիւ մահմէտական կիւրիներ եւ որք թողած շատ մը մահմէտական երախտներ , գայրութի եւ սարսափի ա՛յնպիսի աղաղակ մը կը բարձրանար որ կը խեղդէր հայոց սարսափները միակողմանի աղաղակութող Տարտանելի նեղուցը , սեւ ծովը ու Արարիոյ անապատները խօսին թէ ազատութեան գործին համար քանի՞ քանի՞ մահմէտականներ զո՛հ գացած ու աքսորուած են . . . : Այն աստիճան ճնշուած ենք մենք՝ որ այսօր անսովոր բան մը չէ լսել մահմէտականներուն աղօթելն՝ թէ չուտով դայ մեզ տիրէ մեր դարաւոր թշնամին , քան թէ մենք շարունակենք մնալ այս մարդուն բռնակալութեան տակ որ ներշնչուած է սպաննութեան երկիւղով եւ ամեն ազգի լրտեսներով . . . :

Ներկայ կառավարութեան ժամանակ՝ որ յոտից ց'զլուի ապակախուած ու վատթարացած է , ճնշուած քրիստոնեայն այս կամ այն կերպով կրնայ դիմել ու բողոքել իւր եւրոպացի եղբայրներուն . իսկ որո՞ւ գիմէ ճնշուած թուրքը իւր վիճակին դարման խնդրելու համար » : Սուլթանի գահակալութեան առաջին օրէն իսկ երկիրն մասնաշեղծուած ամենամեծ ձախողութեանց եւ դժբաղդութեանց . թուրքիա որ կըր-

նար պարծենալ 40 միլիոն ժողովուրդով իբր մին առաջնակարգ պետութիւններէն . Սուլթանի Համիտի օրով տկարացաւ ու ինկաւ երկրորդական պետութեան շարքին մէջ , հետզհետէ կորսնցնելով Սերպիա , Ռուսիա , Մոնթենեգրո , Պոսնիա , Պուլկարիա . Հերձեկովինա , Կիպրոս , Եգիպտոս , Թունուզ , Ալճէրի , Կարս , Պաթում , Արեւելեան-Րուսիա , Թեսալիա , Կիլիկիա եւն . եւն : Եւ այսօր 40 միլիոն ժողովուրդէն հազիւ 18 միլիոն ժողովուրդ մնացած է իւր տիրապետութեան տակ : Ըսել է Համիտի Գահակալութեան օրը ժառանգած ընդարձակ երկրին կէսէն աւելի խլած են իւր ձեռքէն . այժմ է եղեր իր կրին « ամենէն երջանկաւոր օրերէն մին » . երկրի մը երջանկութիւնը , անոր զարգացման եւ յաջողութեան մէջ թէ կորստան եւ դժբաղդութեանց մէջ կ'ըմբռնէ հեղինակն . կը փափաքէինք գիտնալ այս կէտն :

Հոս չ'ենք ուզեր ծանրանալ այն կէտին վերայ թէ ինչպիսի շարամիտ եւ դժոխային հրեշտակներ ի գործ դրաւ Համիտ Բ . ի գահ բարձրանալու համար , թէ ինչպէս սպաննել սուլթան իւր հօրեղբայրն Սուլթան Ազիզ եւ ցմահ բանտարկեց գահին օրինակը ժառանգը զՍուլթան Մուրատ . թէ ինչպիսի կեղծ ու պատիւ խօստուներով խարեց ժամանակին ազատական բարձր դասակարգը , որոց վկայ են Միթհատ փաշայի սպաննութիւնը եւ « Գանձող Եւսապի » ինչն ընդմիջ , նաեւ պետական հարուածով ոչնչացուած կայսերական մայրաքաղաքին մէջ գուժամարումն նախօրօք ընդունուած ու դժբաղդութեան դրուած երեսփոխանական ժողովոյ գոյութեանը : Ասոնց ամենը բացորոշապէս նշանակած են արդէն ժամանակին պատմագիրները եւ օտար գրողները , որոց երկերուն , տարակոյս չ'ունինք թէ մօտէն տեղեակ էր արդէն Պ . Հեղինակը իւր վերոյիշեալ ողորմելի գործը յղացած ատեն իսկ :

( Շարունակելի ) ՍՓԻՆՔՍ

ԻՊԵՆՏԻՈՍ Կ . ՍԱՐԱՑԵԱՆ

ԳԵՐՁԱԿ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պապ - Էլ - Հասիթ Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգղիացի վաճառական - դերձակ ԺՕՆ ՔՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելագոյն հմուտ եւ փորձառու , այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրաին դիմացը , նորաչէն խանութիւններուն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ . յաճախորդք ըստ ամենայնի գո՛հ պիտի մնան , արհեստի նրբութիւն տեսնելով , նորաձեւութեանց գանազանութիւններ գտնելով , եւ մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է , չափաւոր վճարումներու փոխան , ձեւաւոր եւ ճաշակաւոր զգեստներ ունենալով :

ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ

ՁՈՒՐՆ ՈՒ ՁՐԱՌՈՒԺՈՒԹԻՒՆԸ

( Շարունակութիւն նախորդ թիւէն )

Ուրեմն , այս օրէնքը մեզ կը սովորեցնէ թէ՛ մարդիկ պարտաւոր են արտասանուած ջուրին տեղը լեցնել ջուրով , չ'իտանգարելու համար մոլոր ջրային գրութեան համակշռութիւնը , եւ առ այս՝ անհրաժեշտ է պտուղներուն ու կերակուրներուն մէջ գտնուած ջուրին քանակն ալ ի նկատ առնուլ :

Երկար ժամանակներու մէջ մտացի հետաքրքրութեամբ եղած բոլոր այս ուսումնասիրութիւններն ու փորձերը ջուրին սնդուգական կարեւորութիւնը զգացնել տուին մեծ մտքերուն՝ որք մարդակազմութեան ու բնախօսութեան , գիտութեան այս լուսամտիւմ զոգջ լապտերնութեան շնորհիւ իրագրել ըլլալով կազմութեան

պատեանին՝ մութին կատարած վսեմ ու էական պաշտօններուն , ջուրով զայն մաքուր պահելու պահանջը բացարձակապէս կենսական ու անվիճելի համարեցին : Չէ՛ որ ամենագէտ Արարիչն ալ ջրհեղեղով լուաց երկիրը՝ իր պղծութիւններէն ու զաղիւր գարշութիւններէն մաքրելու իմաստուն ու արգար խորհրդով մը :

Ջրաբուժական եղանակներուն վրայ բացատրութիւններ տալէ առաջ՝ երկու խօսք ալ անոր պատմական ծագման մասին ըսել կ'արժէ :

ՊԱՏՄԱԿԱՆ . — Նախորդ ժամանակներու մէջ մարմինը զօրացնելու առողջապահական անհրաժեշտ միջոցը սեպուած էր պաղ ջուրը : Մովսէս , ջուրէն հանուած մանուկը , իր կատարելութեան տարիքին մէջ խորայնացի ժողովուրդը վարած ատեն , ջուրին կարեւորութիւնը ըզգացնել տալու գիտումով՝ իր գրքերուն մէջ , լուսարման մասնաւոր օրէնքներ սահմանեց : Սկիւթացիներն ու Մարբըր այլեւայլ համաձայնակ ու տեղական հիւանդութիւններէ զերծ մնալու նախազուշտութեամբ , պարբերաբար կը լուսային իրենց մարմնոյն բոլոր մասերը պաղ կամ գաղջ ջրով : Գիտենք թէ Աբրահամ իրեն հիւր եկող երեք հրեշտակներուն ոտքերը լուաց ճանապարհորդութեան խոնջանքը թիթեղցնելու համար . այս հիւանդուց բարի սովորութիւնը դեռ կէսքաղաքակիրթ ժողովուրդներուն մէջ կը պահուի : Անցեալ դարերու մէջ ջուրին հիւանդաժական ազդակ մը լինելը հաստատող հետքեր կը նշմարուին գրեթէ ամեն ուրեք . սակայն , Գըրիստաէ առաջ , հիւանդորդ դարուն միայն որոշ տեղեկութիւններ կ'ստանանք , ջրաբուժութեան նկատմամբ , Իպոկրատի գործերէն՝ որ ջուրին հանգամանքներուն եւ հիւանդութեանց հանգեցուցեցած ազդեցութիւններուն վրայ կը տեղեկագրէ բացայայտօրէն : Այս վրեւակայնէն սկսեալ ջրաբուժութեան պատմութիւնը երեք մասի կ'ընանք բաժնել . — Առաջինը կ'սկսի հին դարերէն մինչեւ Աւստրիացի Փրիսնից գիւղացին , որ 1834 ին ջրաբուժական հաստատութիւն մը հիմնեց եւ մղում տուաւ գործին զարգացման : Երկրորդը՝ Փրիսնիցի փորձական ջրաբուժութեան ժամանակամիջոցը կ'ընդգրկէ : Երրորդ մասը՝ Փրիսնիցէ վերջ , բանասեր մտքեր բանաւորապէս ծնող ջրաբուժական հոկայ գործին թուին ու հրաշալիքները կը նկարագրէ : Առ այժմ հեղինակութիւն մը ընկու նպատակը չ'ունենալով՝ բաւական պիտի սեպեմ համառօտ ծանօթութիւններ տալ պատմական այս երեք շրջաններուն վրայ :

ԱՌԱՋԻՆ ՇՐՁԱՆ . — Իպոկրատ , բժշկական գիտութեանց հայրը , իր օր . ջուր , եւ բնական իրարմ կոչուած գրքին մէջ կը պատուիրէ բըժիշկներուն քաղաք մը հասած ատենին քննել ի սկզբան տեղւոյն « գործածելի ջուրներուն բըժնութիւնը , որոց ճախճախտու , հանքային , աղի ու գետային չ'լինելը էական՝ եւ դարաւանդներէ , բարձրաւանդակներէ ու ապառաժներէ բղխելն ալ անհրաժեշտ կը նկատէ : Այս մեծ միտքը շատ ժամանակ չ'ունենար հիմնովին ուսումնասիրելու այս կարեւոր խնդրը , սակայն փորձով տեսնելով ջուրին խոտորեցուցիչ ազդեցութիւնները՝ անոր կիրառութիւնը համոզմամբ կը յանձնարարէ :

( Շարունակելի ) Կ . Գ . ՈՒՋՈՒՆԵԱՆ Գահիրէ 17 Հոկտ . 1900

ՆՈՐԱՉԵՒ ՀԱՆՆԼՈՒԿ ՄԸ

Ձոր առաջին անգամ՝ լուծողին նուէր մը պիտի տրուի :

Լուսին մը ունիմ , մեղրէ է շինուած , ունի պահապան երկու սերոյ ճանճ . որոց մին ալէն , ու միւս ձախէն . անոր քաղցրութեան հիւթը կը ծծեն . եւ երբ միանան , թեւ թեւ կուտան իսկոյն դէպ օտար աշխարհ հեռանան . սը՛գ , պը՛գ ընկնով կ'երթան տարփանջով , մարդ չ'հասկնար ինչպիսի խելքով . ճանճը ուր երթայ , ուր որ ալ ըլլայ , ամեն տուն՝ քաղաք , ճանճ է անիկա . կ'երթայ , ու ապա գառնայ վերստին

երթևեկին մէջ չի բխար քնակին .  
բայց մեծ մոլորութիւն , ու բարւոյն պակաս  
այս թեթեւութեան մէջը կը տեսնաս .  
կը ցաւիմ որ մարդը կապկի նման  
կ'ընէ , ինչ բան որ կ'ընէ իւր նման  
վայլէ չ'վայլէ , այդ խորհող չ'կայ ,  
բաւ է որ խնդիրը մտաւ ըլլայ .  
ասոնց անուէր չ'եմ ուզեր , որ տամ ,  
իրենք սիրուն են , բայց ես կ'ամչնամ .  
ուստի զգոյշ կաց , սխալ չ'լուծես ,  
սխալ լուծման մէջ մեծ մեղք կը գործես .  
օ՛ն գու , ուրեմն որոշ բացատրէ ,  
քեզի մէկ բառի մօտ պատրաստ է :

Ս . Յ .

### ՌՈՒՍՈՅ ԶԱՐԸ

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ԶԱՐԻՆ ԴԷՄ . — Տէյ-  
չի թէյնկրաւի Սէվասթօփօլի թղթակիցը հե-  
տեւեւ մանրամասնութիւնները կուտայ , ա-  
միս մը առաջ Զարին գէմ պատրաստուած  
գաւազութեան վրայ :

Սէվասթօփօլի մէջ Լօզովայի երկաթուղ-  
ւոյ գծին վրայ , ուրկիցն . Ն . Վեհափառու-  
թիւնք պիտի անցնէին Խրիմու Սբալա քա-  
ղաքը երթալու համար , կարգ մը ներք-  
նուղիներ ( թիւնէր ) կը գտնուին , որոնցմէ  
միոյն երկայնութիւնը մօտաւորապէս 1500  
մէթր է : Այս ներքնուղւոյն մուտքին առ-  
ջեւ երկաթ խողովակ մը կը գտնուի Սէվաս-  
թօփօլի կողմէն :

Զարին և Զարուհին այս տեղէն անց-  
նելէն 15 օր առաջ , գծին երկայնութեամբ  
տակաւին պէտք եղած պահապան գունդե-  
րը չ'բաժնուած , Մոսկուայի Համալսարանին  
երիտասարդ աշակերտներէն մին , որ Ռուս  
Մովային հրամանատարի մը պաւակն է , ա-  
մեն օր կուգար ներքնուղւոյն շուրջը հողը  
կը փորէր :

Առաջին օրերը , այս երիտասարդին  
գործողութեանցը կարեւորութիւն չ'տրուե-  
ցաւ : Բայց ոստիկան գնդապետ մը , այս ե-  
րիտասարդ գալոցականին ձեւերը ու շար-  
ժումները լաւ մը քննելով այնպէս զգաց  
թէ՛ այս տղան սծիր մը կը խորհէր և իր  
մարդոցմէ մի քանին միասին առնելով երի-  
տասարդին փորած տեղը գնաց :

Ոստիկանները երբ սկսան մտնենալ ,  
ուսանողը նետեց ձեռքէն իւր բահը և ա-  
ճապարանօք փախաւ , սակայն ոստիկաննե-  
րէն մին հասաւ ետեւէն և անմիջապէս ձեռ-  
բակալեց զինքը :

Այ , ժամանակ տեսնուեցաւ որ երկաթ  
խողովակին 56 անգղ . մատնաչափ երկայ-  
նութեամբ մէկ մասը երեւան հանուած է  
երիտասարդին կողմէ և զայն լեցուեր է  
պայթուցիչ նիւթերով և դարձեալ բերա-  
նը լաւ մը գոցուելէ վերջ աւելի խոր թաղ-  
ուեր է հողին մէջ , ներքնուղւոյն ուղղու-  
թեամբը :

Քանի մը օր վերջը այս գծովային մե-  
քենան Սէվասթօփօլի ընդարձակ դաշտե-  
րէն միոյն մէջ պայթեցուցին , ի ներկա .  
յուրեան ոստիկանութեան և դատարանի  
անդամոց :

Ընդհանուրի գաղափարին նայելով կը  
կարծուի թէ՛ եթէ երբէք սոյն ձեւերակը  
յաջողելու ըլլար , կայսերական կառախում-  
բը և ներքնուղին ամբողջովին պիտի խոր-  
տակուէին :

Բազմաթիւ ձեռքակալութիւններ տեղի  
ունեցան , հարաւային Ռուսիոյ և Մոսկուա-  
յի մէջ :

ՌՈՒՍՈՅ ՀԱՅԵՐԸ . — Ռուսիոյ Հայոց  
վիճակը երթալով կը ծանրանայ պիտի կըր-  
նանք ըսել :

Հրատարակչական և Մարդասիրական  
ընկերութիւններու փակումը և սահմանա-  
փակումը ծանուցանելէ վերջ , հետեւեալը  
կը գտնենք Մարտի մէջ :

Բէթէրսպուրկէն կը հեռագրուի թէ՛  
Ռուսիոյ հանրային կրթութեան նախարարը  
պատշաճ դատած է Հայոց հոգևորական  
դպրոցներէն ալ վերցնել հայ լեզուաւ դա-  
ստանդութիւնները . կրօնագիտութիւնը  
միայն հայերէն պիտի աւանդուի :

Հեռագիրը , կ'ըսէ Մարտ , որ այս շատ  
ծանր լուրը կուտայ , լակոնական է . Հա-  
յոց բոլոր դպրոցները արդէն ուսուցած  
էին . հինգ վարժարան իւր կղերանոց կը  
մնային անձեռնմխելի . հաւանական է որ  
հիմակ այդ հաստատութիւններն են Ռու-  
սացեալները :

### ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— 0 —

ՏԱՄԱՏ ՓԱՇԱ . — Կ'ըսեն թէ՛ Մահ-  
մուտ փաշան Պօլիս վերադառնալու համար  
առաջին պայման դրած է իւր 22, 000 ոսկ-  
ւոյ պարտքին վճարումը : Այս տեղեկու-  
թիւնները անհիմն են : Տամատ փաշան պա-  
հանջեց միանգամայն որ Պոլսոյ մէջ իւր  
ազատ բնակութիւնը՝ դեպքանի մը կողմէ  
ապահովուի : Բանակցութիւնները դեռ չ'են  
յանդած , բայց կը յուսանք թէ՛ խնդիրը  
պիտի լուծուի ի գոհունակութիւն ամենուն :

ԲԱՄՊԱԿ . — Կը վստահացնեն թէ՛ այս  
տարուան հունիսը 5 միլիօն դանթարը պի-  
տի անցնի , և գիններու անկումէն վախնա-  
նալու տեղի չ'կայ : Ընդհակառակն բարձրա-  
ցում մը կը նախատեսուի . եթէ Ամերիկայի  
գէշ հունիսին լուրերը հաստատուին :

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

— 0 —

ԱՐԳԻԼՈՒԱԾ ՄԻԹԻՆԿ . — Պարսէլօ-  
նաի իշխանութիւնները Իկնալուայի մէջ տե-  
ղի ունենալիք Միթինկը արգիլեցին : Այս  
Միթինկին մէջ ներկարար գործադուլ գոր-  
ծաւորները մտադիր էին ամբողջ գործա-  
ւորները ընդհանուր գործադուլի հրահրել :  
Քաղաքին շրջականները գտնուած քանի մը  
գործարաններ վերսկսեցին իրենց աշխա-  
տութիւնը :

ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒՄ .  
Հռովմէն Պեռլինի թերթերուն քաջուած  
հեռագիր մը կ'իմացնէ իմն շոգենաւով Նի-  
ու-Եօրքէն եկած երեք անիշխանականնե-  
րուն ձեռքակալումը : Մեկնոյն հեռագիրը  
կ'ըսէ թէ Անգոնէն եկած ուրիշ ինը ան-  
իշխանականներ , որոնք մեկնելու կը պատ-  
րաստուէին , ձեռքակալուած են :

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ . — Մատրի-  
տէն 22 հոկտ . թուականաւ կը հեռագրեն  
թէ՛ զօրավար Ալգարակա՝ դահլիճը կազմե-  
լու համար իւր գիմումները կը շարունակէ .  
Հակառակ նախարարական տագնապին զօ-  
րավար Վէյլէրը ժամը 1 ին պիտի ստանձ-  
նէ Մատրիտի ընդհանուր սպարապետի պաշ-  
տօնը :

ԳՕԼԻՐԱՆ Ի ՃԱՐՈՆ . — Վլատիվօսթօ-  
քէն հոկտ . 19 թուականաւ նույն-ժամին

քաջուած հեռագիր մը կ'ըսէ թէ՛ քօլերայի  
համաճարակը ճարտի մէջ աւելնալու վը-  
րայ է : Այս երկրէն եկած շոգենաւները  
քարանձինայի ենթարկուած են : Քօլերայի  
գէպքեր պատահած են նակասաքիէն Փո-  
սիէյի ծովախորշը հասնող շոգենաւներուն  
մէջ :

ԲԱՆԻ ՄԸ տարիներէ ի վեր սոսկալի  
ֆարթ-փոսթալաւոյնքիւն մը կը տիրէ աշ-  
խարհին մէջ , Բարիկի ցուցահանդէսը նոր  
մղում մը տուաւ այս հաւաքածոյամու-  
թեան : Ուրեմն հիմա ստիկա նոր այժմէու-  
թիւն մ'է , յատուկ ցուցադրութիւն մը բաց-  
ուեցաւ , միայն պատկերազարդ քարդ-փոս-  
թալներու համար Բարիկի Պոնաբարդ փո-  
ղոցին մէջ :

Չորս օր շարունակ 40000 քարդեր ցու-  
ցադրուեցան պատերու վրայ դրուած , այս  
չորս օրերէն յետոյ ուրիշ 40000 քարթեր  
ալ ցուցադրուեցան և այսպէս երրորդ  
անգամ մ'ալ :

Այս ցուցահանդէսին կազմակերպիչը  
Պ . Հէմպօ հետաքրքրաշարժ թուահամար  
մը բռնած է եւրոպայի մէջ շրջաբերութեան  
հանուած քարդերուն վրայ :

Չուիցերիան տարեկան 22 միլիօն պատ-  
կերազարդ քարթ կ'սպառէ , Պէլճիգա և  
Հոլանտա 12 միլիօն , Գերմանիա 88 միլիօն ,  
Աւստրօ-Հունգարիա 31 միլիօն , Իտալիա  
27 միլիօն , Անգլիա 14 միլիօն , Թուրքիա  
2 միլիօն , Սպանիա 4 միլիօն , Իսկ Ֆլանսա  
8 միլիօն :

Իսկ պատկերազարդ քարդերու համար  
յատկապէս հրատակուող թերթերը հետզ-  
հետէ բազմանց նալու վրայ են :

ՀԱՄԲԱԻՆՆԻՍ մասնագէտ մը վերջե-  
րս գիտական աշխարհը յուզեց իր այն գիւ-  
տովը թէ՛ հիւժախտը բազմութիւ զոհեր  
կ'ընէ սիկար ծխողներու մէջ , յայտնի պատ-  
ճառով մը : Արդարեւ սիկարի գործարաննե-  
րու մէջ շատ անգամ կ'աշխատին տկարա-  
կազմ և հիւանդոտ անձեր , որոնք փակուած  
մնալով թունաւորուած մթնոլորտի մը մէջ ,  
մասնաւոր տրամագրութիւն կ'ունենան հիւ-  
ժախտի : Արտասովոր չ'է քանի մը հիւժախ-  
տաւորներ գտնել ամին մէկ գործարանի  
մէջ . այդ ախտացեալներուն բերանները  
միշտ թրջուած վիճակի մէջ են դուրս հան-  
ուած թուքով և լորձոնքով , և եթէ սիկա-  
րը կը փաթտեն թրջելով զայն իրենց շըր-  
թունքներով , զայն ալ կը վարակեն : Ակ-  
ներեւ փաստեր չ'են պակսիր հաստատելու  
համար որ գաղիական ախտը և ուրիշ պըժ-  
գալի և ախթալի հիւանդութիւններ կը փո-  
խանցուին սիկարներու միջոցաւ , որոնք  
պատրաստած են արդէն ախտացեալ գոր-  
ծաւորներ :

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԵՐԱՅԹ ԹԵՐԹԸ կը գրէ  
թէ կառավարութիւնը վճարական միջոցներ  
կը պատրաստէ ստիպելու համար թուրք  
կառավարութիւնը վճարելու այն վնասը զոր  
իր հպատակներն ըրին Հայաստանի շարդե-  
րու միջոցին : Կը կարծուի որ Միացեալ-  
Նահանգները մօտերս վերջնագիր մը պիտի  
զրկեն թուրքիոյ :

ՆԵՍՆԱԻՈՐ ԵՆԿԱՆՊԵՐ . — Կոմս Այնս-  
տէլը քիչ սովորական հաւաքածոյ մը ու-  
նի որ կը բաղկանայ Բրուսիացի իշխանու-  
հիներու և թագուհիներու պատկանած ծըն-  
կակապեր :

Ի միջի այլոց նշանաւոր են Յունաստա-  
նի Սօֆի իշխանուհիները , Մայինքէն իշխա-  
նուհիները , Շառլոտայի-Լիբբէ իշխանու-  
հիները , Վիգթօրիա-Ժօզէֆ կայսրուհիները ,

Յրէտէրիք կայսրուհիինը, Իրէն իշխանուհիինը ևն ևն :

Կրնայ հարցուիլ թէ ինչ գիւանագիտութեամբ Այնսիտէն կոմսը կարողացած է այսպէս հաւաքածոյ մը կազմել :

ՅՈՒՑԱՆՆԵՐԻ ԶՈՒՅՎԱՐՔԸ. — Գրտէ՛ք, երբեմն բժիշկները կ'ըսեն իրենց հիւանդին համար. « քանի մը օր կ'ապրի... յետոյ կը մեռնի. » նոյն բանաձևը կարելի է ի կիր արկանել այսօր ցուցահանդէսի համար. քանի մը օր ալ մնաց որ ցուցահանդէսը մեռնի. այսինքն փակուի : Ինչ երկու կիրակէ ալ, այսինքն տաննէհինգ օր և ամեն բան կը վերջանայ. որովհետեւ պաշտօնապէս յայտարարուած է թէ ցուցահանդէսի դռները վերջնականապէս պիտի գոցուի նոյեմբերի 5 ին :

Շատեր՝ բարեմաղթութիւններ կ'ընեն որ այս ցուցահանդէսը վերջինը ըլլայ, յայտարարելով որ բարեկեցիները շատ դժգոհ են ցուցահանդէսէն, վասնզի անոր համար ամեն բան թանկացաւ, ամեն բանի գինը բարձրացաւ և այդպէս ալ պիտի մնայ մի քանի ժամանակ, կ'ըսեն դարձեալ թէ ցուցահանդէսէն օգտուողները հարուստները ուղարմատէրները եղան, իսկ ժողովուրդը բընաւ օգուտ չ'տեսնելէն զատ վնաս ալ տեսաւ : Կը յուսացուի որ եթէ ուրիշ ցուցահանդէս մը տեղի ունենայ — հաւանականաբար տասը տարիէն — ո՛չ թէ Բարիկ կը սարքուի այլ Ֆրանսայի մի ուրիշ քաղաքին մէջ և աւելի խելացի կերպով կը պատրաստուի, որպէսզի ամենքը օգտուին :

Կ. ՊԱՆՈՅ ՍԵՐՎԵՅ ԹԵՐԹԸ ՀԵՏԼԵՆԿԱՐԸ կը պատմէ. Գանդրիի դործաւորներէն Իսմայիլ անունով չորքէզ մը կայսերական բժշկական վարժարանը դիմեց խնդրելով որ դուրս հանեն պղտիկ օձ մը՝ զոր կը պահէր իր փորին մէջ, և որ գաղտագողի հոն սրպարած մտած էր երբ ինքը ծառի մը տակ կը քնանար արգարի քունով, այսինքն բերանաբաց : Օձին կոկորդէն վար իջնելը այնատեն միայն զգացեր է, երբ կենդանիին պոչը՝ ձօճելով՝ չրթունքներուն քսուեր է :

ԱՒԱԶԱԽՏԻ ԴԱՐՄԱՆ

Նախորդ դարերու մագաղաթեայ բժշկարաններէն քաղուած և խիստ շատ փորձերէ վերջ, օգտակար արդիւնք ձեռք բերելէ յետոյ, կը փութամ յայտարարել աւազախտի հիւանդութեամբ տառապողներուն և մասնաւորապէս դեղագործներու և բժշկաց' որպէսզի ուշադրութիւն դարձնեն սոյն օգտակար դարմանին վրայ :

Աւազախտի միակ դարմանն ունենալու համար պէտք է գիմել ստորագրելոյս հասցէին Ի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ, ՄՈՒՉԻՔԻ ԶՕՐԱՆՈՑԻՆ ԴԻՄԱՑ — Մէյտան ԱՊՏԻՆ :

Գիները

- 10 Ֆրնոգ մէկ բաժին աւազ ունեցողի
20 » երկու » քար ունեցողի .
30 » երեք » արմատացած հիւանդութեանց :

Սոյն դարմանը գործածուած օրէն իսկ պիտի տեսնուի առողջութեան նշաններն և քիչ ժամանակէն կատարելապէս առողջացած պիտի ըլլան այս հիւանդութեամբ տառապողները :

ԴԱՆԷԼ ՀԱՅՍԳՈՐԾԵԱՆ

Տպագրութիւն ժողովրդական ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԶՐԸ

Օստանիյի դեղատանին դիւնացի փողոցին մէջ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշկաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջարեւակներ, Գիտեր, Հրաւիրագրեր, Մանագրեր, Տեղեկագիրներ, Կանոնագրեր, Տոմսեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտահաշիւներ և չախաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ :

ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿՈՒՉԷՔ ՈՒՍԱՆԻԼ

— 0 —

Երիտասարդ մը որ երկար տարիներ ժամագործութեան արհեստին հետեւելով կատարեալ հմտութիւն ստացած է ամեն տեսակ ժամացոյցներ նորոգելու արհեստին մէջ, կ'ուզէ ունենալ ընկեր մը՝ որ վաճառատուն մը բանալու գրամագլուխ և միանդամայն քիչ ատենի մէջ արհեստը ուսանելու փափաքը ունենայ :

Արհեստաւոր երիտասարդը կը գտնուի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ ուր կրնան իրեն հետ բանակցիլ, անոնք որ հետամուտ են :

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԻ

Նոր Կեանք ի եւ Անանիոս Ի Անթերի մի հաւաքածոյն ունենալ փափաքողք առիթը ձեռքէ չ'փախցնելով փութով յմբազրատունս դիմեն, գիւրագին զայնս գնելու :

ՀՅԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՐԱԹ 2 ՆՈՅՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 4580, 3256, 718, 723, 2928, 6284; 5409, 489, 2231, 9165, 4885, 5498; 6703, 6106, 7617, 3650, 9821, 7064; 2613, 6497, 3951, 8773, 8797, 7488; 1634, 4913, 5787

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵՍ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի չահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատարհնեց գումարած է 3 ՄԻԼԵՍ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ այլաբար ուրիշ որ և է ընկերութեան մէջ միլիար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԷԷ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՅԻ

Գանի ուր ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐԵ ի նիքէլ, կոթէն լարող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐԵ և սկսեալ մինչև 2500 ՂՐԵ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ. պատի և քոնսոլի բազմազան Բանտիլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Գոնօկրաֆներու :

Ա Չ Դ

Գղի Օրօր գիւղի Ազգայիններէն Տիար Մարտիրոս Շանօեանի որդի Պ. Կարապետ Շանօեան 26 ամեայ երիտասարդը Հայալից գէպքերէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէաբնակ ազգականները կ'օգնեն գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի այդ երիտասարդը :

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ. Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին, բարեհաճին ծանուցանել Առշաղոյս ի Տնօրինութեան :

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն, որ չնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ. ի հարկին նրմանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ :

Ա. ՊԱԼԵԱՆ

Մ Ա Թ Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն)

Գին 50 ՍԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՄ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱՒԱՔԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԴԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՉ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյին գնել փափաքողներն կամ բաժանորդացուիլ ուղղուեն, կրնան դիմել՝ Առշաղոյս ի ժողովրդական ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին :

Այլաբար մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յԱղեքսանդրիա :